## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 185-Ա

### ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 152-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 14-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին >> թիվ 152-Ա որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
1)Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Արման Մոսինյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 08
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 186-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 153-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 14-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին >> թիվ 153-Ա որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1)Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Արման Մոսինյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 22 թ. հուլիսի 08
ք.Թումանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 187-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղ.-ցի Հայկ Գերասիմի Քոչարյանի դիմումը, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը N 21022022-06-0041 տրված 21.02.2022 թ. և համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Հայկ Գերասիմի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ Թումանյան համայնք գյուղ Դսեղ (ծած.06-035-0130-0006) բնակելի կառուցապատման հողամասին,մակերեսի չափը՝ 0,532148 հա տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ, 6-րդ փողոց,91 հողամաս>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 08
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 188-Ա

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-իթիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 06.06.2022թ. թիվ 77 դրական եզրակացությունը, Թումանյան համայնքի ավագանու 04.07.2022թ. թիվ 60 -Ա որոշումը և Զոհրաբ Լևոնի Պարոնյանի կողմից վճարված կադաստրային արժեքների տարբերության համար բանկ վճարված անդորրագիրը՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում քաղաքացի Զոհրաբ Լևոնի Պարոնյանին սեփականության իրավունքով պատկանող 06-035-0123-0011 կադաստրային ծածկագրով 0,5603 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքից առանձնացված 0,2 հա մակերեսով խոտհարքը փոխադրելու բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

2. Սույն որոշում ուժի մեջ մտնելուց հետո՝օրենքով սահմանված կարգով ժամկետներում, կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Նշված հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր,

գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը և փոփոխված նշանակությամբ համապատասխան օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

4. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 08
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 189-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղ.-ցի Ջոիրաբ Լևոնի Պարոնյանի դիմումը, Թումանյան համայնքի ավագանու 04.07.2022թ.թիվ 60 - Ա որոշումը ,Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը N 16062021-06-0051 տրված 16.06.2021 թ. և համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Ջոիրաբ Լևոնի Պարոնյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ համայնք Դսեղ (ծած.06-035-0123-0011) 0,5603 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքից առանձացված 0.2 հա մակերեսով խոտհարքը փոխադրելու բնակավայրերի հողամասին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ, 4-րդ փողոց,94 հողամաս>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. հուլիսի 08
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 190-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.06.2022թ.թիվ 87 դրական եզրակացությունը, Թումանյան համայնքի ավագանու 04.07.2022թ.թիվ 62-Ա որոշումը և Հայկ Գերասիմի Քոչարյանի կողմից վճարված կադաստրային արժեքների տարբերության համար բանկ վճարված անդորրագիրը՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում քաղաքացի Հայկ Գերասիմի Քոչարյանի սեփականության իրավունքով պատկանող 06-035-0130-0006 կադաստրային ծածկագրով 0,532148 մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:
2. Սույն որոշում ուժի մեջ մտնելուց հետո՝օրենքով սահմանված կարգով ժամկետներում, կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
3. Նշված հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում,բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում

, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը և փոփոխված նշանակությամբ համապատասխան օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

4. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման ‹‹Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 22 թ. հուլիսի 11

ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 191-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Ժիրայր Յուրիի Իշխանյանի / մուտք՝ 04.07.2022թ. թիվ 455/ դիմումը՝

Որոշում եմ.

1.Բավարարել Ժիրայր Յուրիի Իշխանյանի դիմումը և բնակելի տան,ամառային խոհանոցի և զրուցարանի կառուցման շինարարական աշխատանքների կատարման համար տալ շինարարության թույլտվություն:

2. Շինարարական թույլտվությունը ստանալուց հետո շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3օր առաջ Թումանյանի համայնքապետարան ներկայացնել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը:

3.Շինարարական աշխատանքները սկսել համայնքապետարանի կողմից տրամադրված շինար արության թույլտվության առկայության դեպքում:

4.Համայնքապետարանի բյուջե վճարել 15000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 22 թ. հուլիսի 11
ք.Թումանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 192-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ)ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Զավենի Խառատյանի դիմումը, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը N N1330246 տրված 30.06.2004 թ. և համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Քաղաքացի Արթուր Զավենի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի գ. Դսեղ (ծածկագիր՝06-035-058-000006-001) ծածկագրով բնակելի տանը՝ 60,8 քմ մակերեսով և 0,116 հա մակերեսով կառուցապատման և սպասարկման հողամասին տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ Դսեղ, 49-րդ փողոց, տուն 2) հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. հուլիսի 11
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 193-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Լոռու մարզպետի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի ս/թ օգոստոսի 1-ին իմ ղեկավարությամբ Լոռու մարզի Թումանյան համայնքում անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով,Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով՝
Որոշում եմ.

1. Նշանակել՝

1.1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ համայնքի ղեկավարի օգնական Գնել Քոչարյանին: Շտաբը կազմավորել համայնքային ծառայությունների բազայի վրա:

2. Ուսումնավարժությունում ընդգրկել համայնքային կապի և ազդարարման, ինժեներական, բժշկական, տրանսպորտային, առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման , բույսերի և կենդանիների պաշտպանության, հասարակական կարգի պահպանման, կոմունալ-տեխնիկական, էներգետիկայի և լուսաքողարկման, գազապաշտպանման ծառայություններին:

3. Շտաբի պետին. - մշակել և մինչև հուլիսի 15-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը.

- ուսումնասիրել և ճշգրտել համայնքի «ԱԻ առաջացման դեպքում ստեղծվող իրավիճակի և դրա սպառնալիքի դեպքում կամ հետևանքների վերացման ժամանակ գործողությունների պլանը» և դրանց իրականացման մեխանիզմը.

- համայնքային ծառայությունների ու կազմավորումների ղեկավարների հետ անցկացնել տեսական պարապմունքներ, շտաբային վարժանքներ.

-ուսումնավարժության անցկացման ընթացքում ապահովել իրավիճակի մասին տեղեկությունների ժամանակին ընդունումը, ամփոփումը, գնահատումն ու շահագրգիռ մարմիններին հասցնումը.

- նախապատրաստել ղեկավարման կետը.

- ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին ինձ զեկուցել մինչև հուլիսի 15-ը:

4. Համայնքային ծառայությունների պետերին.

1) ուսումնասիրել և ճշգրտել ծառայությունների պլաններն ու խնդիրները: Ակտիվորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

2) կապի ծառայության պետին՝ ապահովել կայուն և անխափան կապ ծառայությունների ու կազմավորումների հետ:

3) տրանսպորտային ծառայությանպետին՝ պատրաստ վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով.

4) բժշկական ծառայության պետին՝
ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը.

5) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետին՝
ճշգրտել ծառայության խնդիրները՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով.

6) հասարակական կարգի պահպանման ծառայության պետին՝ ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով ճշտել ծառայության խնդիրները, պատրաստ վիճակի բերել ծառայության միջոցները:

5.Ուսումնավարժությունների ղեկավարումն իրականացնել համայնքի կառավարման կետից.

6. Ուսումնավարժությունների անցկացման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 11
ք.Թումանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

11 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 194-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 21.06.2022թ.թիվ 85 դրական եզրակացությունը, Թումանյան համայնքի ավագանու 04.07.2022թ. թիվ 61-Ա որոշումը և քաղաքացի Սաշա Արարատի Ղուկասյանի կողմից վճարված կադաստրային արժեքների տարբերության համար բանկ վճարված անդորրագիրը՝
Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում՝ քաղաքացի Սաշա Արարատի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող 06-035-0136-0146 կադաստրային ծածկագրի 3.79794 հա՝որից 3.59574 հա մակերեսով վարելահողը և 0.2022 հա մակերեսով խոտհարքը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության:

2.Սույն որոշում ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով ժամկետներում, կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

3. Նշված հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման

համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը և փոփոխված նշանակությամբ համապատասխան օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

4. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022թ. հուլիսի 11
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 195-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղ.-ցի Սաշա Արարատի Ղուկասյանի դիմումը, Թումանյան համայնքի ավագանու 04. 07. 2022թ. թիվ 61 -Ա որոշումը ,Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը N 17122021 տրված 17.12.2021 թ. և համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Սաշա Արարատի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ համայնք Դսեղ (ծած.՝06-035-0136-0146,06-035-0136-0146) 3,79794 հա՛որից 3,59574 հա մակերեսով վարելահողը և 0,2022 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը որը փոխադրվել է բնակավայրերի հողամասի տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ, 5-րդ փողոց,67 հողամաս>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. հուլիսի 11
ք.Թումանյան